

Հավելված  
Հայաստանի Հանրապետության  
փաստաբանների պալատի խորհրդի  
15.01.2014թ. թիվ 01/7-Լ որոշման

ՀՀ փաստաբանների պալատի  
խորհրդի նախագահ՝

\_\_\_\_\_ Արա Զոհրաբյան

**ՀԱՆՐԱՅԻՆ ՊԱՇՏՊԱՆԻ ԱՇԽԱՏԱՆՔԻ  
ԱՆՑՆԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՄՐՑՈՒՅԹԻ  
ԱՆՑԿԱՑՄԱՆ**

**Կ Ա Ր Գ**

ք. Երևան  
2014թ.

## 1. Ընդհանուր դրույթներ

1.1. Հանրային պաշտպանի աշխատանքի անցնելու նպատակով մրցույթի անցկացման կարգը (այսուհետ՝ Կարգ) սահմանում է հանրային պաշտպանի թեկնածուների համար մրցույթի (այսուհետ՝ Մրցույթ) կազմակերպման և անցկացման, հանրային պաշտպանի թեկնածությունների ցուցակում ընդգրկվելու, հանրային պաշտպանին պաշտոնի նշանակելու ընթացակարգերը, ինչպես նաև կարգավորում է հարակից այլ հարաբերություններ:

*(կեպը փոփոխվել է 28.11.2017թ. թիվ 24/3-Լ որոշմամբ)*

1.2. Հանրային պաշտպան կարող է նշանակվել հանրային պաշտպանի թեկնածուների մրցույթում հաղթող ճանաչված և հանրային պաշտպանի թեկնածությունների ցուցակում ընդգրկված փաստաբանը, բացառությամբ սույն կարգի 5.8-րդ կետով նախատեսված դեպքի:

1.3. Հանրային պաշտպան նշանակելու համար կարող է անցկացվել երկու մրցույթ, որից մեկը քաղաքացիական և վարչական ուղղվածության հանրային պաշտպաններ նշանակելու, իսկ մյուսը՝ քրեական ուղղվածության հանրային պաշտպաններ նշանակելու համար:

*(կեպը փոփոխվել է 28.11.2017թ. թիվ 24/3-Լ որոշմամբ)*

1.4. Հանրային պաշտպանի թեկնածությունների ցուցակը բաղկացած է չորս բաժնից. 1-ին բաժնում ընդգրկվում են Երևան քաղաքում նշանակվելու համար դիմած, մրցույթում հաղթող ճանաչված և քրեական ուղղվածություն ունեցող հանրային պաշտպանի թեկնածուները, 2-րդ բաժնում՝ Երևան քաղաքում նշանակվելու համար դիմած, մրցույթում հաղթող ճանաչված և քաղաքացիական ու վարչական ուղղվածություն ունեցող հանրային պաշտպանի թեկնածուները, 3-րդ բաժնում՝ Հայաստանի Հանրապետության մարզում նշանակվելու համար դիմած, մրցույթում հաղթող ճանաչված և քրեական ուղղվածություն ունեցող հանրային պաշտպանի թեկնածուները՝ ըստ մարզերի, և 4-րդ բաժնում՝ Հայաստանի Հանրապետության մարզում նշանակվելու համար դիմած, մրցույթում հաղթող ճանաչված և քաղաքացիական ու վարչական ուղղվածություն ունեցող հանրային պաշտպանի թեկնածուները՝ ըստ մարզերի:

*(կեպը լրացվել է 09.09.2020թ. թիվ 18/12-Լ որոշմամբ)*

1.5. Հանրային պաշտպանի թեկնածուների համար մրցույթին մասնակցելու համար կարող է դիմել փաստաբանը, որի արտոնագրի գործողությունը դիմելու պահին կասեցված չէ: Մրցույթին կարող է մասնակցել նաև փաստաբանների պալատի որակավորման հանձնաժողովի վկայագիր ստացած անձը, որը, սակայն, չի կարող ընդգրկվել հանրային պաշտպանի թեկնածությունների ցուցակում, եթե սույն Կարգի 4.14. կետով նախատեսված որոշումը կայացնելու պահին չի ստացել փաստաբանի արտոնագիր:

*(կեպը փոփոխվել է 09.09.2020թ. թիվ 18/12-Լ որոշմամբ)*

1.6. Սույն կարգով սահմանված կարգով նշանակված հանրային պաշտպանների աշխատանքային պայմանագրերը կնքվում են 1 (մեկ) տարի

ժամկետով, բայց ոչ ավել քան մինչև դեկտեմբերի 31-ը, որի ավարտից հետո վերջիններս կարող են նորից նշանակվել հանրային պաշտպան՝ սույն կարգի 1.2-րդ կետով նախատեսված ընթացակարգերն անցնելուց հետո, բացառությամբ սույն կարգի 5.4.-րդ կետով նախատեսված դեպքի:

*(կեդր վոփոխվել է 14.11.2023թ. թիվ 23/21-L որոշմամբ)*

1.7. Հանրային պաշտպանի թեկնածությունների ցուցակում ընդգրկված թեկնածուի գրանցումը (հաշվառումը) պահպանվում է երկու տարի ժամկետով:

*(կեդր լրացվել է 25.05.2016թ. թիվ 14/4-L որոշմամբ)*

1.8. Հանրային պաշտպանի թեկնածությունների ցուցակում ընդգրկված թեկնածուն հանվում է ցուցակից՝

ա. հանրային պաշտպան նշանակվելու դեպքում՝ նշանակվելու պահից,

բ. հանրային պաշտպանի առկա թափուր հաստիքը համալրելու առաջարկը թեկնածուի կողմից մեկ տարվա ընթացքում երկրորդ անգամ մերժելու դեպքում՝ առաջարկը մերժելու (առաջարկին չպատասխանելու) պահից,

գ. Մրցույթին մասնակցելու դեպքում՝ Մրցույթին մասնակցելու դիմում ներկայացնելու պահից,

դ. սույն կարգի 1.7 կետում նշված ժամկետը լրանալու դեպքում,

ե. փաստաբանի արտոնագրի գործողությունը դադարեցվելու դեպքում:

*(կեդր լրացվել է 12.11.2018թ. թիվ 20/13-L և 09.09.2020թ. թիվ 18/12-L որոշումներով, փոփոխվել է 14.11.2023թ. թիվ 23/21-L որոշմամբ)*

## 2. Մրցույթի կազմակերպման կարգը

2.1. Սույն կարգի 1.3-րդ կետով նախատեսված մրցույթներն անցկացվում են տարին մեկ անգամ:

*(կեդր վոփոխվել է 25.05.2016թ. թիվ 14/4-L, 12.11.2018թ. թիվ 20/13-L որոշումներով)*

2.2. Մրցույթի անցկացման մասին Պալատի նախագահն ընդունում է որոշում, որի մեջ նշվում է նաև հանրային պաշտպանների թափուր տեղերի քանակը, Մրցույթին մասնակցելու համար դիմումների ընդունման ժամկետը, ինչպես նաև ըստ մասնագիտական ուղղվածության առկա թափուր տեղերի գործունեության իրականացման վայրը (այսուհետ՝ Աշխատավայր), որտեղ թեկնածուն, ելնելով իր բնակության վայրի կամ այլ հարմարություններից, պետք է իրականացնի հանրային պաշտպանությունը: Սույն կետում նշված տեղեկությունները հրապարակվում են Պալատի պաշտոնական ինտերնետային կայքէջում՝ [www.advocates.am](http://www.advocates.am) և հայտարարություն է փակցվում պալատի հայտարարությունների տախտակի վրա: Մրցույթի անցկացման որոշումը հրապարակվում է մրցույթի անցկացման օրվանից առնվազն տաս օր առաջ:

*(կեդր վոփոխվել է 16.09.2016թ. թիվ 19/9-L, 12.11.2018թ. թիվ 20/13-L որոշումներով)*

2.3. Մրցույթին մասնակցելու դիմումների ընդունման ժամկետը չի կարող հինգ օրից պակաս լինել:

*(կետրը փոփոխվել է 16.09.2016թ. թիվ 19/9-L որոշմամբ)*

2.4. Հավակնորդների դիմումներն ընդունվում են Պալատի աշխատակազմի կողմից Պալատի նախագահի սահմանած ժամկետում՝ աշխատանքային օրերին՝ ժամը 10.00-ից մինչև 17.00-ն: Հավակնորդների դիմումի ձևը հաստատում է Պալատի նախագահը: Դիմումի մեջ պարտադիր լրացվում է՝ անունը, ազգանունը, Աշխատավայրը (քաղաք Երևան կամ համապատասխան մարզ), մասնագիտական ուղղվածությունը, համակարգչին տիրապետելու հմտությունների և սույն Կարգին համաձայնվելու մասին նշումը, որից հետո փաստաբանն ստորագրում է դիմումը: Անստորագիր դիմումները չեն ընդունվում:

*(կետրը փոփոխվել է 12.11.2018թ. թիվ 20/13-L, լրացվել է 09.09.2020թ. թիվ 18/12-L որոշումներով)*

2.5. Փաստաբանը կամ սույն կարգի 1.5 կետում նշված անձը հավակնորդի կարգավիճակ է ձեռք բերում դիմումը Պալատի կողմից ընդունվելու պահից:

*(կետրը փոփոխվել է 28.11.2017թ. թիվ 24/3-L, 12.11.2018թ. թիվ 20/13-L և 09.09.2020թ. թիվ 18/12-L որոշումներով)*

2.6. Մրցույթին (գրավոր կամ հարցազրույցի փուլերին) ցանկացած պատճառով (հարգելի և անհարգելի) չմասնակցած (ուշացած) հավակնորդը համարվում է հավակնորդի կարգավիճակից զրկված:

2.7. Մրցույթին թույլատրվում է մասնակցել անձը հաստատող փաստաթղթով կամ փաստաբանական գործունեության վկայականով ներկայանալու դեպքում:

*(կետրը փոփոխվել է 12.11.2018թ. թիվ 20/13-L որոշմամբ)*

### **3. Մրցութային հանձնաժողովի ձևավորման կարգը և իրավասությունները**

3.1. Մրցույթի կազմակերպման և մրցույթի արդյունքների գնահատման համար ստեղծվում է մրցութային հանձնաժողով (այսուհետ՝ Հանձնաժողով):

3.2. Հանձնաժողովը կազմված է հինգ անդամներից:

3.3. Պալատի նախագահի տեղակալն ի պաշտոնե Հանձնաժողովի նախագահն է: Հանրային պաշտպանի գրասենյակի ղեկավարն ի պաշտոնե Հանձնաժողովի անդամ է:

*(կետրը փոփոխվել է 25.05.2016թ. թիվ 14/4-L որոշմամբ)*

3.4. Հանձնաժողովի մյուս երեք անդամներին ընտրում (նշանակում) է Պալատի նախագահը՝ փաստաբանների կազմից՝ որոշակի ժամկետով: Հանձնաժողովի աշխատանքներին հանձնաժողովի ընտրված անդամների մասնակցությունը փոխհատուցվում է, որի չափը սահմանում է Պալատի նախագահը:

*(կետրը փոփոխվել է 12.11.2018թ. թիվ 20/13-L որոշմամբ)*

3.5. Հանձնաժողովի քարտուղարին Պալատի աշխատակազմից նշանակում

է Պալատի նախագահը: Հանձնաժողովի քարտուղարը չի հանդիսանում հանձնաժողովի անդամ:

3.6. Հանձնաժողովն իր նիստերը գումարում է ըստ անհրաժեշտության՝ Հանձնաժողովի նախագահի կամ Հանձնաժողովի անդամներից առնվազն երկուսի նախաձեռնությամբ: Հանձնաժողովի անդամները նիստի ժամանակի, վայրի և օրակարգի մասին ծանուցվում են էլեկտրոնային փոստի միջոցով, նիստից առնվազն մեկ օր առաջ:

*(կետր վոփոխվել է 28.11.2017թ. թիվ 24/3-L որոշմամբ)*

3.7. Հանձնաժողովի նիստերը վարում է Հանձնաժողովի նախագահը, իսկ նրա բացակայության դեպքում՝ հանձնաժողովի անդամներից մեկը՝ Հանձնաժողովի նախագահի հանձնարարությամբ:

3.8. Հանձնաժողովի նիստն իրավազոր է, եթե դրան մասնակցում է առնվազն երեք անդամ:

3.9. Հանձնաժողովի որոշումներն ընդունվում են նիստին մասնակցող հանձնաժողովի անդամների ձայների պարզ մեծամասնությամբ: Հանձնաժողովի յուրաքանչյուր անդամ ունի մեկ ձայն: Քվեարկության ժամանակ Հանձնաժողովի անդամը չի կարող ձեռնպահ մնալ: Ձայների հավասարության դեպքում Հանձնաժողովի նախագահի ձայնը որոշիչ է:

3.10. Հանձնաժողովի որոշումը ստորագրում է Հանձնաժողովի նախագահը և քարտուղարը:

*(կետր վոփոխվել է 12.11.2018թ. թիվ 20/13-L որոշմամբ)*

3.11. Հանձնաժողովը՝

1) ուսումնասիրում է հավակնորդների կողմից ներկայացված փաստաթղթերը.

2) հաստատում է գրավոր փուլի խնդիրները և հարցազրույցի ընթացքում հավակնորդի համակարգչից օգտվելու, ինպես նաև հավակնորդի արագ կողմնորոշվելու կարողությունների, հավակնորդի բանավոր խոսքի և փաստաբանի վարքագծին ներկայացվող պահանջների իմացության ստուգման համար նախատեսվող խնդիրները և/կամ հարցերը.

3) հետևում է գրավոր փուլի ընթացքին.

4) ստուգում է գրավոր փուլի արդյունքները.

5) կազմակերպում և անցկացնում է հարցազրույց.

6) որոշում է կայացնում՝

6.1) հավակնորդի կարգավիճակից զրկելու մասին.

6.2) դիտորդի կարգավիճակից զրկելու մասին.

6.3) հավակնորդին մրցույթում հաղթող ճանաչելու և հանրային պաշտպանի թեկնածությունների ցուցակում ընդգրկելու կամ մրցույթում հաղթող չճանաչելու մասին.

7) հաստատում է դիտորդների հավատարմագրման կարգը և դիտորդի վկայականի ձևը.

8) իրականացնում է Մրցույթի կազմակերպմանն առնչվող այլ իրավասություններ:

*(կետրը փոփոխվել է 28.11.2017թ. թիվ 24/3-L, 12.11.2018թ. թիվ 20/13-L որոշումներով)*

3.12. *(կետրն ուժը կորցրել է 28.11.2017թ. թիվ 24/3-L որոշմամբ)*

#### **4. Մրցույթի անցկացման կարգը, մրցույթի փուլերը**

4.1. Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ գրավոր և հարցազրույցի:

4.2. Գրավոր փուլի ժամանակ հավակնորդներից պահանջվելու է կազմել 1) հայցադիմում կամ քաղաքացիական (վարչական) գործով վերաքննիչ բողոք, կամ 2) քրեական գործով վերաքննիչ բողոք: Գրավոր փուլի համար հավակնորդներին տրամադրվելու է համակարգիչ՝ անհրաժեշտ իրավական ակտերի (բացառությամբ հրապարակված դատական ակտերի) էլեկտրոնային տարբերակներից օգտվելու հնարավորությամբ: Գրավոր փուլի ժամանակ հավակնորդին կարող է չթույլատրվել օգտվել ինտերնետային կայքերից (ինտերնետ հասանելիությունը կարող է սահմանափակվել): Հավակնորդը գրավոր առաջադրանքը կատարում է համակարգչով՝ Microsoft Office Word ծրագրի միջոցով: Գրավոր փուլի տևողությունը չի կարող գերազանցել 4 (չորս) ժամը:

*(կետրը փոփոխվել և լրացվել է 25.05.2016թ. թիվ 14/4-L,*

*փոփոխվել է 28.11.2017թ. թիվ 24/3-L և 14.11.2023թ. թիվ 23/21-L որոշումներով)*

4.3. Հանձնաժողովը ձեռնարկում է անհրաժեշտ միջոցներ Գրավոր փուլի ընթացքում առաջադրանքներ կատարած հավակնորդների անձը առաջադրանքը ստուգող հանձնաժողովի անդամին չբացահայտելու ուղղությամբ: Գրավոր փուլն իրականացվում է հետևյալ ընթացակարգով.

4.3.1. Հանձնաժողովի նախագահը կամ անդամը հավակնորդներին համառոտ ներկայացնում է գրավոր փուլի վերաբերյալ անհրաժեշտ տեղեկություններ՝ նշելով նաև գրավոր փուլի տևողությունը:

4.3.2. Հավակնորդներն իրենց տեղն ընտրում են վիճակահանության միջոցով և քննական սրահում զբաղեցնում են վիճակահանությամբ որոշված տեղը:

4.3.3. Կազմակերպչական գործողություններն իրականացնելուց հետո Հանձնաժողովի նախագահը կամ անդամը հայտարարում է գրավոր փուլի սկիզբը: Գրավոր փուլի ժամանակը սկսվում է հաշվարկվել այդ պահից:

4.3.4. Ժամանակն ավարտվելուց հետո Հավակնորդը պարտավոր է անմիջապես հանձնել աշխատանքը, այլապես կհամարվի գրավոր փուլը չհանձնած:

4.3.5. Բացի Հանձնաժողովի անդամներից, Խորհրդի անդամներից, Հանձնաժողովի կողմից հավատարմագրված դիտորդներից, օժանդակ

աշխատակազմից և հավակնորդներից՝ այլ անձանց չի թույլատրվում ներկա գտնվել քննական սրահում:

- 4.3.6. Հավակնորդը Հանձնաժողովի նախագահի կամ անդամի թույլտվությամբ ժամանակավոր կարող է դուրս գալ քննական սրահից բացառապես Հանձնաժողովի անդամներից կամ դիտորդներից մեկի ուղեկցությամբ: Միաժամանակ մեկից ավելի հավակնորդի չի թույլատրվում դուրս գալ քննական սրահից՝ բացառությամբ արտակարգ բնույթ կրող դեպքերի:
- 4.3.7. Եթե Դիտորդի կամ Հանձնաժողովի անդամի մոտ հիմնավոր կասկած է առաջանում, որ հավակնորդն իր մոտ թաքցնում է Կարգի 4.4 կետում նշված որևէ արգելված նյութ (առարկա), ապա Դիտորդը հրավիրում է Հանձնաժողովի որևէ անդամի (իսկ Հանձնաժողովի անդամը՝ նաև առանց դիտորդ հրավիրելու) և նրա ներկայությամբ հավակնորդից պահանջում է ցույց տալու արգելված նյութը (առարկան): Եթե հավակնորդը հրաժարվում է ցույց տալ իր գրպանի կամ հագուստի այլ մասի (թաքստոցի) պարունակությունը կամ ցույց է տալիս Կարգի 4.4 կետում նշված որևէ արգելված նյութ (առարկա), ապա հավակնորդը հեռացվում է քննական սրահից և համարվում է, որ նա չի հանձնել գրավոր փուլը: Սույն կետում նշված դեպքում Հանձնաժողովն ընդունում է արձանագրային որոշում, որի քաղվածքը ողջամիտ ժամկետում տրամադրվում է հավակնորդին: Հավակնորդի ցանկությամբ գրպանի կամ հագուստի այլ մասի (թաքստոցի) պարունակությունը կարող է ցույց տրվել նույն սեռի առնվազն երկու անձի (դիտորդի և (կամ) Հանձնաժողովի անդամի) ներկայությամբ՝ առանձին սենյակում:
- 4.3.8. Գրավոր փուլի ժամանակ ներկա գտնվելու իրավունք ունեցող անձանց արգելվում է ցանկացած ձևով օգնել հավակնորդներին: Դիտորդը չի կարող առանց Հանձնաժողովի անդամի ներկայության հաղորդակցվել հավակնորդի հետ:
- 4.3.9. Հավակնորդն աշխատանքն ավարտելուց հետո այն տպում է երկու օրինակից, որոնցից մեկ օրինակի վրա գրում է իր անուն, ազգանունը և բոլոր էջերը ստորագրում: Այնուհետև, պատահականության սկզբունքով հավակնորդը ընտրում է ծածկագրերի տարայից ծածկագիր (ինքնակաշուն թղթի վրա), որը փակցվում է նրա կողմից տպված երկու աշխատանքների վրա: Հավակնորդն իր կողմից չստորագրված օրինակը (աշխատանքը) հանձնում է Հանձնաժողովի անդամին, իսկ ստորագրված երկրորդ օրինակը ծախելուց հետո տեղադրում է Պալատի կնիքով կնքված արկղի մեջ, որը բացվում է գրավոր քննության արդյունքների հրապարակումից հետո՝ ներկա գտնվող հավակնորդների ներկայությամբ:

4.3.10. Հանձնաժողովը կարող է հեղինակի և աշխատանքի նույնականացման հետ կապված գաղտնիության միջոցներ չձեռնարկել, եթե մրցույթի գրավոր փուլին մասնակցում է մեկ անձ: Սույն դեպքում հավակնորդն աշխատանքն ավարտելուց հետո տպում է մեկ օրինակից, ստորագրում է բոլոր էջերի վրա և հանձնում Հանձնաժողովի անդամին:

*(կեպը փոփոխվել է 28.11.2017թ. թիվ 24/3-Լ որոշմամբ)*

4.4. Քննական սրահ հավակնորդներին արգելվում է տանել որևէ թուղթ, գրիչ, պայուսակ, բջջային հեռախոս, ձայնագրիչ, ուտելիք կամ այլ պարագաներ, բացառությամբ հաշմանդամ կամ առողջական խնդիրներ ունեցող հավակնորդների, որոնք Հանձնաժողովի նախագահի թույլտվությամբ կարող են քննական սրահ տանել առարկաներ, ջուր, սննունդ կամ դեղորայք: Գրավոր փուլի ժամանակ հավակնորդին չի թույլատրվում ծխելը կամ ծխելու պատրվակով դուրս գալը կամ քննական սրահի հարկը լքելը: Սույն կետի պահանջները խախտած Հավակնորդը Հանձնաժողովի նախագահի կամ անդամի կողմից հեռացվում է քննական սրահից:

*(կեպը փոփոխվել է 28.11.2017թ. թիվ 24/3-Լ որոշմամբ)*

4.5. Գրավոր փուլում հավակնորդի կողմից իր անձի բացահայտմանն ուղղված որևէ նշում կատարվելու դեպքում հավակնորդը համարվում է գրավոր փուլը չհանձնած՝ անկախ առաջադրանքի կատարման բովանդակությունից:

*(կեպը փոփոխվել է 28.11.2017թ. թիվ 24/3-Լ որոշմամբ)*

4.6. Գրավոր փուլի գնահատումն իրականացվում է 20 (քսան) միավորի համակարգով, որից անցողիկ միավորը 12 (տասներկու), հետևյալ կերպ՝

*(կեպը փոփոխվել է 25.05.2016թ. թիվ 14/4-Լ որոշմամբ)*

#### **4.6.1. քաղաքացիական և վարչական ուղղվածության մասով՝**

**Ա) Հայցադիմումի գնահատման չափանիշներ (առավելագույն միավորը՝ 20 (քսան), անցողիկը՝ 12 (տասներկու))**

- **Հայցադիմումին ներկայացվող ձևական պահանջներ՝** ընդհանուր միավորը՝ մինչև 2 (երկու).

- **Նկարագրական մաս (փաստերի ընտրություն)՝** ընդհանուր միավորը՝ մինչև 5 (հինգ), որից յուրաքանչյուր ավել ընտրված և վեճի համար էական նշանակություն չունեցող փաստի համար նվազեցվում է 0,5 միավոր (2 միավորից ոչ ավել), յուրաքանչյուր չընտրված և վեճի լուծման համար էական նշանակություն ունեցող փաստի համար նվազեցվում է 1 միավոր (3 միավորից ոչ ավել).

- **Պատճառաբանական մաս՝** ընդհանուր միավորը՝ մինչև 9 (ինը), որից՝ **ա)** յուրաքանչյուր ավելորդ (վեճի լուծման հետ ուղղակիորեն կապ չունեցող) վկայակոչված իրավական նորմի և/կամ պատճառաբանության համար նվազեցվում է 0,5 միավոր (1 միավորից ոչ ավել), **բ)** սխալ վկայակոչված (գործի փաստերի նկատմամբ ոչ կիրառելի) իրավական նորմի և/կամ պատճառաբանության համար նվազեցվում է 1 միավոր (2 միավորից ոչ ավել), **իսկ գ)** չվկայակոչված (անհրաժեշտ և կիրառելի) իրավական նորմի (նորմերի) կամ ճիշտ վկայակոչված նորմի (նորմերի) թերի կամ սխալ պատճառաբանության



համար նվազեցվում է մինչև 6 (վեց) միավոր.

- **Եզրափակիչ մաս՝** ընդհանուր միավորը՝ մինչև **4 (չորս):**

**Բ) Վճռի դեմ վերաքննիչ բողոքի գնահատման չափանիշներ (առավելագույն միավորը՝ 20 (քսան), անցողիկը՝ 12 (տասներկու))**

- **Վերաքննիչ բողոքին ներկայացվող ձևական պահանջներ՝** ընդհանուր միավորը մինչև **2 (երկու).**

- **Վերաքննիչ բողոքի հիմք և հիմնավորումներ,** այդ թվում՝ դատական սխալի վերհանում, նյութական և/կամ դատավարական իրավունքի այնպիսի խախտում, որը կարող էր ազդել գործի ելքի վրա, ինչպես նաև հիմնավորվածություն և պատճառաբանություն՝ նյութական կամ դատավարական իրավունքի նորմերի վերլուծություն և համադրում գործի փաստերի հետ, ինչպես նաև գործի ելքի վրա դրանց ազդեցության հիմնավորում և տրամաբանական կապ՝ ներկայացված պահանջի հետ, ընդհանուր միավորը մինչև **16 (տասնվեց)**, (սույն չափանիշով գնահատման համար հաշվի է առնվելու նաև ոչ էական նորմերի և/կամ փաստերի վկայակոչումը).

- **Վերաքննիչ բողոքի պահանջ (խնդրամաս)՝** ընդհանուր միավորը մինչև **2 (երկու):**

Գնահատման չափորոշիչների կիրառման արդյունքում ձևավորված ընդհանուր գնահատականը կարող է նվազեցվել ուղղագրական սխալների, լեզվական, կառուցվածքային, ոճական և նմանատիպ այլ թերությունների համար՝ մինչև 3 միավոր:

*(ենթակետը լրացվել է 25.05.2016թ. թիվ 14/4-Լ, 21.10.2022թ. թիվ 17/7-Լ որոշումներով)*

#### **4.6.2. քրեական ուղղվածության մասով՝**

**Դատավճռի դեմ ներկայացվող վերաքննիչ բողոքի գնահատման չափանիշներ (առավելագույն միավորը՝ 20 (քսան), անցողիկը՝ 12 (տասներկու))**

- **Վերաքննիչ բողոքին ներկայացվող ձևական պահանջներ՝** ընդհանուր միավորը մինչև **2 (երկու).**

- **Վերաքննիչ բողոքի հիմք և հիմնավորումներ,** այդ թվում՝ դատական սխալի վերհանում, նյութական և/կամ դատավարական իրավունքի այնպիսի խախտում, որը կարող էր ազդել գործի ելքի վրա, ինչպես նաև հիմնավորվածություն և պատճառաբանություն՝ նյութական կամ դատավարական իրավունքի նորմերի վերլուծություն և համադրում գործի փաստերի հետ, ինչպես նաև գործի ելքի վրա դրանց ազդեցության հիմնավորում և տրամաբանական կապ՝ ներկայացված պահանջի հետ, ընդհանուր միավորը մինչև **16 (տասնվեց)** (սույն չափանիշով գնահատման համար հաշվի է առնվելու նաև ոչ էական նորմերի և/կամ փաստերի վկայակոչումը).

- **Վերաքննիչ բողոքի պահանջ (խնդրամաս)՝** ընդհանուր միավորը մինչև **2 (երկու):**

Գնահատման չափորոշիչների կիրառման արդյունքում ձևավորված ընդհանուր գնահատականը կարող է նվազեցվել ուղղագրական սխալների, լեզվական, կառուցվածքային, ոճական և նմանատիպ այլ թերությունների համար՝ մինչև 3 միավոր:

*(ենթակետը լրացվել է 25.05.2016թ. թիվ 14/4-Լ, 21.10.2022թ. թիվ 17/7-Լ որոշումներով)*

4.7. Գրավոր փուլն ավարտվելուց հետո, տաս օրվա ընթացքում Հանձնաժողովն իր կողմից սահմանված կարգով գնահատում է հավակնորդի գրավոր աշխատանքը: Հանձնաժողովը պետք է այնպիսի միջոցներ ձեռնարկի, որպեսզի բացառվի գրավոր աշխատանքով հավակնորդի բացահայտման հնարավորությունը:

*(կեպը փոփոխվել է 16.09.2016թ. թիվ 19/9-L, 28.11.2017թ. թիվ 24/3-L որոշումներով)*

4.8. Գրավոր փուլի արդյունքները կարող են հավակնորդի կողմից բողոքարկվել ՀՀ փաստաբանների պալատի խորհրդին (այսուհետ՝ Խորհուրդ)՝ գնահատականի մասին իրազեկվելու պահից երեք օրվա ընթացքում:

*(կեպը փոփոխվել է 16.09.2016թ. թիվ 19/9-L, 28.11.2017թ. թիվ 24/3-L որոշումներով)*

4.9. Գրավոր փուլի արդյունքների բողոքարկման դեպքում Խորհուրդը սահմանված կարգով հրավիրում է նիստ: Եթե հանձնաժողովի անդամը միևնույն ժամանակ հանդիսանում է Խորհրդի անդամ, ապա վերջինս մասնակցում է խորհրդի նիստին առանց քվեարկելու իրավունքի:

*(կեպը փոփոխվել է 25.05.2016թ. թիվ 14/4-L, 28.11.2017թ. թիվ 24/3-L որոշումներով)*

4.10. Գրավոր փուլի արդյունքների բողոքարկման արդյունքում Խորհուրդը կայացնում է որոշում բողոքը մերժելու կամ հավակնորդին հարցազրույցի փուլին մասնակցելու թույլտվություն տալու մասին: Որոշումը պետք է լինի պատճառաբանված:

*(կեպը փոփոխվել է 28.11.2017թ. թիվ 24/3-L որոշմամբ)*

4.11. Գրավոր փուլը հաղթահարած հավակնորդը հրավիրվում է հարցազրույցի: Հարցազրույցի օրվա, ժամանակի և վայրի մասին հավակնորդները ծանուցվում են էլեկտրոնային փոստի միջոցով, հարցազրույցի օրվանից առնվազն երեք օր առաջ: Հարցազրույցին հավակնորդները հրավիրվում են առանձին՝ ըստ ազգանունների այբբենական հերթականության:

*(կեպը փոփոխվել է 25.05.2016թ. թիվ 14/4-L որոշմամբ)*

4.12. Հարցազրույցի շրջանակներում հավակնորդին ներկայացվում են իրավիճակային խնդիրներ՝ պարզելու համար հավակնորդի արագ կողմնորոշվելու կարողությունները, ստուգվում է հավակնորդի բանավոր խոսքը, ինչպես նաև փաստաբանի վարքագծին ներկայացվող պահանջների իմացությունը: Հարցազրույցի փուլում ստուգվում է նաև իրավաբանական ծառայությունների շրջանակներում էլեկտրոնային ռեսուրսներից օգտվելու՝ արագ գտնելու, արդյունավետ ռեսուրս (աղբյուր) օգտագործելու հավակնորդի կարողությունն՝ առնվազն երկու առաջադրանքի կատարման միջոցով:

*(կեպը փոփոխվել է 21.10.2022թ. թիվ 17/7-L որոշմամբ)*

4.13. Հարցազրույցը արձանագրվում է պարզ թղթային եղանակով Հանձնաժողովի քարտուղարի կողմից կամ ձայնագրառման միջոցով:

4.14. Հարցազրույցի ավարտից հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում հանձնաժողովը հարցազրույցի փուլին մասնակցած յուրաքանչյուր հավակնորդի համար սույն կարգի 3.9-րդ կետով նախատեսված կարգով կայացնում է պատճառաբանված որոշում՝ մրցույթին հաղթող ճանաչելու և հանրային

պաշտպանի թեկնածությունների ցուցակում ընդգրկելու կամ մրցույթում հաղթող չճանաչելու մասին: Հավակնորդը, որը սույն կետով նախատեսված որոշումը կայացնելու պահին չի ստացել փաստաթանի արտոնագիր, համարվում է հավակնորդի կարգավիճակից զրկված:

*(կետր վոփոխվել է 12.11.2018թ. թիվ 20/13-L, լրացվել է 09.09.2020թ. թիվ 18/12-L որոշումներով)*

4.15. Սույն կարգի 4.14-րդ կետով նախատեսված որոշումը էտրիրդին բողղքարկման ենթակա չէ:

4.16. Մրցույթի գրավոր փուլին և հարցազրույցին կարող են ներկա գտնվել Պալատի էտրիրդի անդամները, ինչպես նաև Հանձնաժողովի կողմից սահմանված կարգով հավատարմագրված դիտորդները, իսկ մրցույթի գրավոր փուլին՝ նաև զանգվածային լրատվության միջոցները՝ Հանձնաժողովի նախագահի թույլտվությամբ:

*(կետր վոփոխվել է 28.11.2017թ. թիվ 24/3-L որոշմամբ)*

4.17. Դիտորդներն իրավունք չունեն հաղորդակցվել հավակնորդների հետ: Եթե դիտորդներն իրենց վարքագծով խոչընդոտում են մրցույթի իրականացմանը, ապա հանձնաժողովի որոշմամբ կարող է արգելվել վերջիններիս մասնակցությունը մրցույթին:

*(կետր վոփոխվել է 28.11.2017թ. թիվ 24/3-L որոշմամբ)*

## **5. Հանրային պաշտպանի նշանակման կարգը**

5.1. Սույն կարգով նախատեսված մրցույթի ավարտից հետո 5 (հինգ) աշխատանքային օրվա ընթացքում Հանձնաժողովը, ըստ սույն կարգի 1.4-րդ կետով նախատեսված բաժինների, ձևավորում և Պալատի նախագահին է ներկայացնում հանրային պաշտպանի թեկնածությունների համալրված (թարմացված) ցուցակը:

5.2. Պալատի նախագահը, հաշվի առնելով հանրային պաշտպանների առկա թափուր հաստիքները Հանձնաժողովի նախագահի կամ հանրային պաշտպանի գրասենյակի ղեկավարի ներկայացմամբ հանրային պաշտպանի թեկնածությունների ցուցակից կատարում է համապատասխան նշանակումներ՝ հնարավորության դեպքում ապահովելով, որ հանրային պաշտպանների ընդհանուր թվի առնվազն 30 (երեսուն) տոկոսը համալրված լինի մինչև 3 (երեք) տարվա փաստաթանական գործունեության ստաժ ունեցող փաստաթաններով:

*(կետր լրացվել է 16.10.2014թ. թիվ 28/12-L որոշմամբ)*

5.3. *(կետր ուժը կորցրել է 12.11.2018թ. թիվ 20/13-L որոշմամբ)*

5.4. Առանց մրցույթի անցկացման հանրային պաշտպանի հետ կնքված աշխատանքային պայմանագրի մեկամյա ժամկետը կարող է երկարացվել ևս մեկ տարով, եթե հանրային պաշտպանը Պալատի էտրիրդի հաստատաժ՝ հանրային պաշտպանների գործունեության ստուգման և գնահատման մասին կարգով

(այսուհետ՝ Գնահատման կարգ) սահմանված կարգով ստացել է համապատասխան անցողիկ միավորներ: Ընդ որում, վերը նշված գնահատման համակարգը սահմանվում է այնպես, որ յուրաքանչյուր տարի հանրային պաշտպանների ընդհանուր թվի առնվազն 30 (երեսուն) տոկոսը հնարավորություն ունենա երկարաձգել իր աշխատանքային պայմանագիրը:

*(կետրը փոփոխվել է 12.11.2018թ. թիվ 20/13-L և 14.11.2023թ. թիվ 23/21-L որոշումներով)*

5.5. Եթե որևէ հանրային պաշտպանի հետ կնքված աշխատանքային պայմանագիրը լուծվում է նախքան ժամկետը լրանալը, ապա նրա փոխարեն հանրային պաշտպան է նշանակվում հանրային պաշտպանի թեկնածությունների ցուցակում ընդգրկված փաստաբանը, կամ թափուր հաստիքը համալրվում է այլ հանրային պաշտպանի տեղափոխության (փոխադրման) միջոցով:

*(կետրը լրացվել է 16.11.2021թ. թիվ 17/15-L որոշմամբ)*

5.6. Սույն Կարգի 5.5-րդ կետում սահմանված դեպքում նոր նշանակված հանրային պաշտպանի հետ կնքվող աշխատանքային պայմանագրի ժամկետ է սահմանվում մինչև տվյալ տարվա դեկտեմբեր ամսվա վերջին աշխատանքային օրը:

5.7. Հանրային պաշտպանի հղիության և ծննդաբերության արձակուրդի, ինչպես նաև մեկ ամիսը գերազանցող ժամկետով անաշխատունակության դեպքում սույն Կարգի 5.5-րդ կետով սահմանված կարգով նշանակվում է հանրային պաշտպան՝ մինչև փոխարինվող հանրային պաշտպանի վերադարձը:

*(կետրը փոփոխվել է 12.11.2018թ. թիվ 20/13-L որոշմամբ)*

5.8. Եթե հանրային պաշտպանի թափուր հաստիքը հնարավոր չէ համալրել հանրային պաշտպանի թեկնածությունների ցուցակից (ցուցակում համապատասխան աշխատավայրում աշխատելու կամ համապատասխան մասնագիտացում ունեցող անձի ընդգրկված չլինելու կամ այլ պատճառով), ապա հանրային պաշտպանի նշանակումն իրականացվում է «Փաստաբանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 44-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված կարգով:

Հանրային պաշտպանների մասնագիտացման և ըստ մարզերի (մարզերի նստավայրերի) բաշխվածության (հաստիքների բաղդատման) փոփոխության դեպքում հանրային պաշտպանի նշանակումը կարող է կատարվել «Փաստաբանության մասին» օրենքի 44-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված կարգով:

Հանրային պաշտպանի թափուր հաստիքը կարող է համալրվել նաև այլ հանրային պաշտպանի տեղափոխության (փոխադրման) միջոցով:

*(կետրը լրացվել է 18.11.2020թ. թիվ 23/14-L որոշմամբ և 16.11.2021թ. թիվ 17/15-L որոշմամբ)*

5.9. «Փաստաբանության մասին» օրենքի 41-րդ հոդվածի 9-րդ մասի 1-ին կետով սահմանված եղանակով ծառայությունների վճարովի մատուցման պայմանագրի հիման վրա հանրային պաշտպանի գրասենյակում չընդգրկված փաստաբանների միջոցով հանրային պաշտպանությունը կազմակերպելու

դեպքում կարող է նախապատվություն տրվել հանրային պաշտպանի թեկնածությունների ցուցակում ընդգրկված փաստաբաններին:

*(կետր վոփոխվել է 14.11.2023թ. թիվ 23/21-Լ որոշումներով)*

## **6. Անցումային և եզրափակիչ դրույթներ**

6.1. Սույն կարգն ուժի մեջ է մտնում 2014 թվականի հունվարի 16-ից և գործում է անժամկետ:

6.2. Սույն կարգն ուժի մեջ մտնելուց հետո առաջին մրցույթն անցկացվում է 2014թ. փետրվարին, իսկ մրցույթում հաղթող ճանաչված հանրային պաշտպանների հետ աշխատանքային պայմանագրերը կնքվում են 2014թ. մարտի 1-ից և գործում են մինչև 2014թ. դեկտեմբեր ամսվա վերջին աշխատանքային օրը: Առաջին անգամ մրցույթի չեն մասնակցում հանրային պաշտպանների ընդհանուր թվի առնվազն 50 տոկոսը կազմող հանրային պաշտպանները, որոնց ցանկը Հանրային պաշտպանի գրասենյակի ղեկավարի ներկայացմամբ հաստատում է Պալատի նախագահը: Հանրային պաշտպանի գրասենյակի ղեկավարը նշված ցանկը ներկայացնում է Պալատի նախագահին մինչև 2014թ. հունվարի 30-ը: Պալատի նախագահը կարող է ներկայացված ցուցակը հաստատել ամբողջությամբ կամ մասնակի: Առաջին մրցույթի անցկացման ժամկետը, վայրը և առանձնահատկությունները սահմանում է Պալատի նախագահը:

Սույն կարգն ուժի մեջ մտնելուց հետո երկրորդ մրցույթն անցկացվում է 2014թ. նոյեմբերին և/կամ դեկտեմբերին: Երկրորդ մրցույթին չեն մասնակցում հանրային պաշտպանների ընդհանուր թվի առնվազն 60 (վաթսուն) տոկոսը կազմող հանրային պաշտպանները, որոնց ցուցակը Հանրային պաշտպանի գրասենյակի ղեկավարի և Հանձնաժողովի նախագահի ներկայացմամբ հաստատում է Պալատի նախագահը: Սույն պարբերության մեջ նշված ցուցակը ներկայացվում է Պալատի նախագահին մինչև 2014թ. նոյեմբերի 5-ը: Պալատի նախագահը կարող է ներկայացված ցուցակը հաստատել ամբողջությամբ կամ մասնակի: Մրցույթի անցկացման մասին Պալատի նախագահն ընդունում է որոշում՝ սույն պարբերության մեջ նշված ցուցակը հաստատելուց հետո:

*(պարբ. լրացվել է 16.10.2014թ. թիվ 28/12-Լ որոշմամբ)*

6.3. Կարգի հետ կապված մեկնաբանությունները (պարզաբանումները) տրվում են ՀՀ փաստաբանների պալատի խորհրդի կողմից՝ վերջինիս նախաձեռնությամբ կամ շահագրգիռ անձի դիմումի հիման վրա: